

Ղուկասի անունով՝ իբր նորութիւն պիտի չյայտարարէր։ Դարձեալ, ոչ միայն Հ. Ղուկասի զրչէն ելած, այլ նաեւ մեր Բ. կոչած ձեռագիրն ալ կարծես անտես մնացած է Ալիշանէ, այն յայտնի փաստով որ՝ Սիսականին մէջ իր մէջբերումները, օր, երկար դրուագը «Անդ էր տեսանել» (էջ 256-7) գոր մենք ալ ստորեւ պիտի դնենք (էջ 180-181) ուղղակի Արգար Գուլամիրեանի «Դու չիր րեկ» հրատարակութենէն են և ոչ մեր Մխիթարեան ձեռագիրներէն կամ Չամչեանէ։

Հ. Միքայէլ Չամչեան ալ իր կարգին Բ. ձեռագրին է որ կը հետեւի ընդհանրապէս, ինչպէս կը ցուցնեն ստորեւ մէկ երկու համեմատութիւններ։

Հ. Մկրտիչ Ազեբեան միայն այս երկրորդ ձեռագիրն է որ տեղով և թուով կը յիշէ իր ձեռքով գրած վանքիս զրչագիրներու ցանկին մէջ, և բնականաբար ոչ Հ. Ղուկասի անունով այլ ընդհանուր և անորիշ ձեւով իբր մերիններէն գրուած. «ՂԱՓԱՆՅԻՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ, ուր գրին գործք Դաշիր պէկին և գործակցաց նորա՝ Մխիթար զօրավարի և Տէր Աւետի ևն. գրեալ ի ՄԵՐԱՅՈՅ՝ առեալ ի բերանոյ նոյն ՏԷՐ ԱԻՆՏԻ ԵՒ ԱՅԼՈՅ»։

Մերայոց յոգնակի ձեւը հաւանօրէն խմբագրութիւն մը կ'ենթադրէ, այսինքն քանի մը հոգւոյ գրածները ամփոփած և ձուլած, որոնց մէջ անշուշտ հիմ եղած է Հ. Ղուկասի համառօտ գրութիւնը։

Հ. Մ. Ազեբեանի վկայութիւնը հոս թանկագին է մեզի համար, անով որ ոչ միայն ծանօթ Հ. Ղուկասէն զատ ուրիշ գրողներ ալ կ'ենթադրէ, այլ նաեւ նոր

պատմական աղբիւրներ կը յիշէ, այսինքն մինչեւ ցարդ յիշուած Ստեփան Շահու մեանէն զատ՝ Տէր Աւետիսը, մանաւանդ թէ նախ Տէր Աւետիսը և ապա ուրիշներ։ Այդ վկայութիւնը հուսկ խնդրական կէտ մը կը լուսարանէ Տէր Աւետիքի շուրջ, ինչպէս պիտի ստիպուինք յետոյ յիշել։

Հ. Մ. Ազեբեանի լուծութիւնը Հ. Ղուկասի անուն և գործի մասին, ինչպէս նաեւ Հ. Ալիշանի նորօրինակ դիրքը այդ անուան շուրջ անով կը մեկնուին՝ որ Հ. Ղուկասի բուն ձեռագիրը իբրեւ նախնական գործ և ինչ ինչ տեղ թերի և խառնակ՝ մնացած է դիւանի մէջ հեղինակին հոս յիշուած և ուրիշ քանի մը ձեռագիրներուն հետ։

Արդարեւ ինչպէս յայտնի է ձեռագրին վրայ դրուած թիւէն և նշաններէն և համապատասխան ձեռագրաց ցուցակին մէջ անցուած շեղագիր թարմ գրէն՝ ողբ. Հ. Աւետիք Վ. Գազէգեան է որ զայն վերջերս գետեղած է ձեռագրատան մէջ 1928-1929ի շրջանին։ Նշանակենք հոս որ Չամչեան իր պատմութեան մէջ ոչ մէկ յիշատակ կամ ակնարկ ունի Ս. Շահու մեանի և զօրավար Աւետիք քահանայի մասին որպէս պատմող աղբիւրներ Դաւիթ բէկեան պատերազմներուն։

Իբրեւ հետաքրքրական բաժին մեր ընթերցողներուն՝ հոս սիւնակներով մէկ երկու նմոյշ կը բերենք վերեւ յիշուած կրկին ձեռագիրներէն՝ բաղդատուած Չամչեանի տպագրուած պատմութեան հետ, ուր պատմականէն զատ պիտի տեսնուի ր. ձեռագրին լեզուն որ Մակարայեցւոց գրքին մարտական շունչը կը զգացնէ։

Ձ. (Ա.) - Հ. ՂԱԿԱՍԻ

Եւ այլազգիքն իբրեւ լուան, թէ տաւութ պէկն անցաւ ի գաւառնդուն. ել ապի զուլին, և որդին զագու, և որդին շահիսլաւ մին երկոտասան հազարաւ. և անցին յալանկեղայ սարոյն ի կենեւուն զն և զբոլոր զիւրոյսն այրեցին, և լուր էհաւ տաւութ պէկին վասն այսր ամենայնի ի չաւունդուն, զի յաւուրսն յայնոսիկ բնակէր նա ի ծով և ել չորս հազարաւ ի վերայ այլազգեացն, և

Ձ. (Բ.) - ՄԻԽԻ. ՀԱՐՅ

Առդ իբրեւ լուր եղև ի յուրդուար, թէ Դաւիթ անցեալ է ի չափնդուր, ելին կազմեցան պատրաստեցան սափի զուլին, որդին զագու, և որդին շահիսլամին, և և առեալ ընդ իւրեանս զօր բազում, իբր երկոտասան հազարաւ զային հասանէին ի կողմանս կենաուգայ, և անցեալք ի յալանկեղայ սարոյն զամենայն զիւզօրէն կենաուգայ այրեցին։ Ապա զուլկան հասանէր առ Դաւիթ

ՊՏՄ. ՉԱՄՉԵԱՆ Գ, 789

Գուժկան եհաւ առ նա անդ, թէ ժամանցին ի կենաուգայ լազգիք Որդուվարայ երկոտասան հազար զօրօք, և այրեցին զգիւղօրէս Գուժացաւ Դաւիթ, և էհաւ ընդ իւր երկու հազար այր եւս ի սահմանաց անտի, և ստիպաւ հասեալ ի գաւառն կենաուգ՝ նստաւ ի կալիւր մօտ ի Մեղրու գետ իսկ այլազգիք՝ որք բանակեալ էին յայնկոյս գետոյն, իբրեւ տեսնի զարսն Դաւիթ, կալան զգետափն՝